



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 15-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
14-րդ հոդվածով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի ՓԵՏՐՎԱՐԻ
28-ի թիվ 3 հերթական նիստի ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Բյուջեի տարեկան կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաշվետվությունը:
2. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու
մասին:
3. Լեռնանիստ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ
կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից
ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը հաստատելու մասին:
4. Պարտավորություն ստանձնելու մասին:
5. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի
N 48-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
6. Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի գործունեությունը վերսկսելու մասին:
7. 2018 թվականի Լեռնանիստի մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական
վճարների և արտոնությունների սահմանման մասին:
8. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի
N 46-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին:
9. <<Հայաստանի համայնքների միություն>> իրավաբանական անձանց միությանը անդամակցելու
մասին:
10. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի
N 50-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

[Handwritten signatures for the 9 'Yes' votes]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 16-Ն

ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

- Հաստատել 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը, համաձայն հավելվածի:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման 10-րդ օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՐ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվականի N 17 -Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 1 -ին մասի 30 -րդ կետով, 42 -րդ հոդվածի 1 -ին մասի 3 -րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
- Ուժը կորցրած ճանաչել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի << Կոտայքի մարզի Լեռնանիստ գյուղական համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին >> N 93-Ա, 2016 թվականի փետրվարի 26-ի << Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N 93-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N7-Ա որոշումները:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ՔԱՂԱՔԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ՔԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱՔՅԱՆ ՔԵՐՈՔ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՐԱՐԱԿԱՆ**

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, մշակվում և հաստատվում է գոտևորման նախագծի կազմում՝ հավելվածի տեսքով:

1.2. Համայնքի ավագանու կողմից հաստատվելուց հետո քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում՝ համապատասխան դրույթներ ամրագրելով առաջադրանքի ձևի «Լրացուցիչ պայմաններ» բաժնում:

**II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)**

2.1. Համայնքում հատակագծային-տարածական կառուցվածքը կրում է մասնատված բնույթ՝ կապված տարածքի ռելեֆային բարդ պայմանների հետ: Լեռնանիստ համայնքը Հրազդանի տարածաշրջանի ամենամեծ գյուղական համայնքն է: Համայնքի վարչական տարածքը կազմում է 4541 հա, բնակչության թվաքանակը՝ 3218 մարդ: Գտնվում է Երևանից 45 կմ, իսկ Հրազդանից՝ 7 կմ հեռավորության վրա: Համայնքն ունի 663 տնտեսություն: Մենակսար լեռան հյուսիսային կանաչապատ և ծաղկաշատ լանջին գտնվող Լեռնանիստ համայնքը հիմնադրվել է 1828թ-ին: Ըստ տեղեկությունների բնակչությանը հիմնականում բնակվել են նկուղային տնակներում: Համայնքում հիմնական կառուցապատումը սկսվել է 1940-ական թվականներին՝ նկուղային և 1 հարկայնությամբ տներ կառուցմամբ: Տները կառուցվել են կրող պատերի սկզբնունքով, ինչով և պայմանավորված է դրանցում պատուհանների և բացվածքների փոքր չափերը: Հիմնական շինանյութ է հանդիսացել տուֆը և բազալտը:



1958-61 թվականին համայնքում երկաթբետոնե կոնստրուկցիաններով կառուցվել է դպրոցի ուսուցիչների համար նախատեսված բազմաբնակարան շենքը, որը այժմ սեփականաշնորհվել է շենքում բնակվող բնակիչների կողմից:

1970-ական թվականներին սկսվել է միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաններով սեփական տների շինարարությունը: Միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաններով կառուցման եղանակը հնարավորություն է ստեղծել իրականացնելու ավելի մեծ պատուհանների բացվածքներ Համայնքի տարածքում կառուցված հասարակական և վարչական շենքերի հիմնական մասը կառուցվել է նմանատիպ տեխնոլոգիայով:

Համայնքում կառուցված սեփական տները, դրանց մի մասը կախված տեղանքի ռելեֆից կառուցվել են փոփոխական հարկայնության եղանակով՝ կրկնելով տեղանքի ռելեֆը: Հավաքովի կոնստրուկցիաները գործարանում արտաքինից երեսպատված են տուֆե սալիկներով:

Համայնքի տարածքում կառուցապատման ժամանակ օգտագործվել են հետևյալ ճարտարապետական ոճերը՝ հայկական դասական, հայկական մոդեռն, կուրիզմ և այլն:

2.2. Համայնքի կառուցված սեփական տների ճարտարապետական ոճի, կրկնվող և հաճախ կիրառվող տարրերի լուսանկարները:





2000 - ական թվականներին համայնքում կառուցված շենքերը






Հայկական դասական ճարտարապետական ոճի շենքեր




Լեռնանիստի մշակույթի տուն

Համայնքի մշակույթի տունը
շահագործման է հանձնվել 1975
թվականին: Ունի դահլիճ՝ կահավորված
336 նստատեղերով, դասասենյակներ,
սպորտ դահլիճ: Մշակույթի տանը
գործում է գրադարան, ունի 200-250
ընթերցող:



Լեռնանիստի բժշկական ամբուլատորիայի
շենք

Լեոնանիստի <<Բժշկական ամբուլատորիա>>
ՀՈԱԿ-ը կառուցվել է «Հայաստանի
առողջապահական համակարգի արդիականացում
ծրագիր-2» հավելյալ ֆինանսավորման
վարկային ծրագրով: Բացման արարողությունը
կատարվել է 2013 թվականի սեպտեմբերի 4-ին:



Լեռնանիստի Ս.Նազարյանի անվան
միջնակարգ դպրոց

Լեոնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ դպրոցը կրում է համագյուղացի, Արցախյան պատերազմում զոհված Սպարտակ Բալաբեկի Նազարյանի անունը: 1992թ. նա՝ որպես Հրազդանի ինքնապաշտպանական գումարտակի հրամանատար, մեկնեց Արցախ: Լաչինում մղված անհավասար մարտում 1992թ. հոկտեմբերի 8-ին զոհվեց:

Մեծարելով համագյուղացուն՝ դպրոցի մանկավարժ
ական խորհուրդը որոշեց դպրոցն անվանակոչել

հերոսի անունով: Որոշման հիման վրա 1994թ-ից դպրոցը կրում է Սպարտակ Նազարյանի անունը:



Լեռնանիստի մանկաարտերի շենք

Կառուցվել է 1970 -ական թվականներին,
շահագործման է հանձնվել 1982 թվականին:




III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1 Լեռնանիստ համայնքը հիմնադրվել է 1828թ-ին: Նախկինում կոչվել է Վերին Ախտա, 1978 թվականին վերանվանվել է Լեռնանիստ: Բնակիչները Խոյից, Մակուից, Բաղեշից և Սալմաստից 1828-1829թթ. Հայաստան ներգաղթածների ժառանգներն են, պատվախնդիր հայերի սերունդներ: Համայնքում կա ազգագրական թանգարան, ինչպես նաև առկա են IV -XIII դարերի պատմամշակութային կոթողներ:

Լեռնանիստի ազգագրական թանգարան

2015 թվականի ապրիլի 24-ին կատարվել է Լեռնանիստի ազգագրական թանգարանի բացման արարողությունը, որը նվիրված է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի 100-րդ տարելիցին: Ազգագրական թանգարանում պահպանվում են տարբեր դարաժրջանների հնագիտական նշանակություն ունեցող մոտ 300 նմուշ





ՀԱՅԱՏՈՒՆ

խորհրդանշում է հին
ժամանակներում համայնքում
բնավող բնակիչների
ապրելակերը



Հայրենական Մեծ պատերազմի
զոհվածների հիշատակը հավերժացնող
հուշարձանին

Հայրենական մեծ պատերազմին Կուրայ
քի մարզի Լեռնանիստ համայնքից մաս
նակ-ցել են 656 մարդ , որոնցից 214-ը
հերոսաբար ընկել են ռազմի դաշտում,
իսկ մնացածը պարգևատրվել են մարտա-
կան շքանշաններով ու մեդալներով:
Չոհվածների հիշատակը հավերժացնող
հուշարձանին, անուն առ անուն
գրված են բոլոր զոհված հերոսների
անունները:


Հուշարձանի հարակից տարածքում թաղված է Արցախյան պատերազմում զոհված Լեռնանիստ համայնքի
բնակիչ՝ Սպարտակ Նազարյանի աճյունը: Նա 1992թվականին որպես Հրազդանի ինքնապաշտպա-
նական գումարտակի հրամանատար, մեկնեց Արցախ: Նա զոհվեց 1992 թվականի հոկտեմբերի 8-ին ,
Լաչինում մղված անհավասար մարտում:




1992թ Ղարաբաղյան պատերազմում Լեռնանիստ
համայնքից զոհվեցին և վիրավորվեցին շատ
բնակիչներ:

Չոհվեցին՝ Սպարտակ Բալաբեկի Նազարյանը,
Մերուժան Խաչիկի Հարությունյանը,
Գարիկ Գրիշայի Նազարյանը,
Անդրանիկ Ենգիբարի Օհանյանը,
Արմեն Յուրիկի Ստեփանյանը,
Արթյոմ Մայիսի Պողոսյանը,
Ռուդիկ Սարգսի Սարգսյանը
Լիպարիտ Գուրգենի Թադևոսյանը,
Գագիկ Ասատուրի Մուրադյանը,
իսկ Նորիկ Զանիբեկի Մեհրաբյանը,
Վարգեն Գրիշայի Մարգարյանը և Սամվել Միհր
անի Սարգսյանը ստացեցել են 2րդ կարգի
հաշմանդամության կարգ:

Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար-հուշակոթող





Սուրբ Ավագան


Լեռնանիստում պահպանված լավագույն եկեղեցիներից է 1893 թվականին վերանորոգված Սուրբ Հակոբ եկեղեցին և Ավագանի աղբյուրը:

Նախկին Վերին Ախտայի և ներկայիս Լեռնանիստի բնակիչների համար մեծ հուսատեղ է եղել Սուրբ Ավագան կոչվող եկեղեցին: Սովի, գրկանքի, հույսի պակասի տարիներին միակ սփոփանքը շատ ու շատերի համար եղել է Սուրբ Ավագանը:

Եկեղեցին ավերվել է 13-րդ դարի վերջերին Լենկ-Թեմուրի՝ հրոսակախմբերի կողմից: Հետագայում

այն նորից վերաշինվել է: Սկզբում եղել է եկեղեցին, իսկ նրա տակից դուրս է եկել աղբյուրը:

Անհիշելի ժամանակներից այս Սուրբ ջուրը օգնել է մարդկանց բուժելու մի շարք հիվանդություններ, առանձնապես մաշկային հիվանդություններ: Աղբյուրի անմիջապես վերևում կառուցվել է Սուրբ Ավագան եկեղեցին: Զրի ակունքը գտնվում է եկեղեցու տակ: Հավատավոր մարդիկ Ավագանի բուժիչ հատկությունը վերագրում են Սուրբ Աստվածածին եկեղեցուն:



Սուրբ Մարիամ եկեղեցի

Կառուցվել է 1892 թվականին



Սուրբ Կարապետ եկեղեցի


3.2 Լեռնանիստ համայնքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ
հուշարձանները

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	նշան.	հավելյալ նշումներ
Գերեզմանոց	13-20 դդ	Գյուղի հս կողմում	<	
Խաչքար	13-14 դդ		<	
Խաչքար	15-16դդ		S	
Խաչքար	16-17դդ		S	
Խաչքար	16-17դդ		S	
<u>ԳԼԽԱՏՈՒՆ</u>	19դ	Գյուղի մեջ	S	
Գյուղատեղի	Ուշ միջնադար	Գյուղից 6 կմ հվ-աե	S	<<դայլ>> վայրում
Եկեղեցի	Ուշ միջնադար		S	
ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ	Ք.ա.2հազ.	Գյուղից 1կմ աե	<	
ԵԿԵՂԵՑԻ ՍԲԱՍՏՎԱԾԱԾԻՆ	1892-1906թթ	Գյուղի մեջ	S	
Խաչքար	10դ		<	
Խաչքար	13դ	Ագուցված է եկեղեցու պատին	<	
Խաչքար	15դ	Ագուցված է եկեղեցու պատին	<	
Խաչքար	1556թ		<	արձանագիր
Խաչքար	16-17 դդ	Ագուցված է եկեղեցու պատին	<	Արձանագիր
Տապանաքար	1417թ		<	Արձանագիր
Տապանաքար	16-17դդ		<	Արձանագիր
Տապանաքար	1674թ		<	Արձանագիր
Տապանաքար	17 դ	Ագուցված է եկեղեցու պատին՝ հվ-աե անկյունում	<	Կենցաղային քանդակներով
ԽԱՉՔԱՐ	13-14դդ	Գյուղից հս	<	
ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1980թ	Ակումբի դիմաց	<	
ՄԱՏՈՒՌ ՍԲՀԱԿՈՔ	1893-1902թթ	Գյուղի հվ կողմում	S	Մուտքի մոտ ագուցված է հունարեն արձանագրությամբ, 1861 թվակիր քար

Խաչքար	9-10դդ	Ագուցված է մատուռի պատին	<	
Խաչքար	12-13դդ	Ագուցված է մատուռի պատին	<	
Խաչքար	13 դ.	Ագուցված է մատուռի պատին	<	
Խաչքար, կազմող՝ Մելքոն	1571թ	Ագուցված է մատուռի պատին	<	
Աղբյուր	1902թ		S	
ԽԱՉՔԱՐ	10դ	Գյուղի մեջ, կենցաղի տան մոտ	<	
ԽԱՉՔԱՐ	10դ.	Գյուղի մեջ	<	Նորաշեն սրբատեղիում
ԽԱՉՔԱՐ	10-11դդ	Գյուղի մեջ	<	Նորաշեն սրբատեղիում
ԽԱՉՔԱՐ	10-11դդ	Գյուղի մեջ	<	Նորաշեն սրբատեղիում
ԽԱՉՔԱՐ	11դ	Գյուղի մեջ, կենցաղի տան մոտ	<	
ՄԱՏՈՒՌ	1902թ	Գյուղի մեջ	S	
ՄԱՏՈՒՌ ԶՈՐԱՎՈՐ	Միջնադար	Գյուղի աե մասում	S	
ՍՐՔԱՏԵՂԻ <<ԱՎԵՏԱՐԱՆ>>	19դ	Գյուղի մեջ	S	
ՍՐՔԱՏԵՂԻ ՍՐ.ԿԱՐԱՊԵՏ	19դ	Գյուղի մեջ	S	<.Ներսիսյանի այգում

Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018թ. փետրվարի 12-ի թիվ 01/15.2/761-18 հանձնարարականի անհրաժեշտ է հետևողականորեն իրականացնել <<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված մեր լիազորությունները, մասնավորապես՝ հուշարձանների տարածքներում ցանկացած բնույթի աշխատանքներ իրականացնել լիազոր մարմնի թույլտվությամբ՝ համագործակցելով ՀՀ մշակույթի նախարարության տարածքային բաժինների մասնագետների և <<Պահպանության ծառայություն>> ՊՈԱԿ-ի հետ /պետական սեփականություն հանդիսացող հուշարձանների դեպքում/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐՏԵՁ



IV. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃՐ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

4.1. Համայնքի տարածքում նոր սեփական տների կառուցման ժամանակ խրախուսվում են հայկական դասական, հայկական մոդերն և համաշխարհային ժամանակակից ճարտարապետական ոճի կիրառումը:

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլյացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

1-2 հարկանի բնակելի տների երկար կողմերի միջև հեռավորությունը (կենցաղային խզումներ) պետք է ընդունել 15 մետրից ոչ պակաս և Այս սեփական տների բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև՝ 15 մ-ից ոչ պակաս և Նշված

հեռավորությունները կարող են կրճատվել ինսուլյացիայի և լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերը, ըստ օգտագործման բնույթի, կառուցապատման իրավունքով կարող են տրամադրել հետևյալ ժամկետներով՝

ա) ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում հասարակական նշանակության օբյեկտների տեղադրման համար 20 տարի ժամկետով,

բ) փողոցների անմիջականորեն հարող տարածքներում՝ հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների տեղադրման համար՝ 15 տարի ժամկետով.

գ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից հասարակական կառուցապատման համար վարձակալության տրամադրել մինչև 98 տարի ժամկետով.

2. Կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանվում են վճարների հետևյալ չափերը՝

ա) ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներում / զբոսայգի, պուրակ/ հասարակական նշանակության / կրպակ, մանկական սրճարան, տաղավար, խաղասրահ, ատրակցիոն/ օբյեկտների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի եռապատիկի չափով.

բ) 1-ին փողոցին, 1-ին փողոց 12 նրբանցքին հարող հատվածներում հասարակական նշանակության օբյեկտների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի եռապատիկի չափով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի կրկնապատիկի չափով, 2-րդ փողոցին հարող հատվածներում հասարակական նշանակության օբյեկտների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի կրկնապատիկի չափով, արտադրական նշանակության կառույցների տեղադրման համար՝ սահմանված նվազագույն վճարի 1.5 - ապատիկի չափով, մնացած փողոցներին հարող տարածքներում՝ սահմանված նվազագույն վճարի չափով.

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

• Նոր կառուցվող բնակելի տների նախագծման ժամանակ բնակելի տան մասշտաբը համապատասխանեցնել միջավայրի հետ:

Պատուհանների, դռների բացվածքներում ողջունվում է հայկական զարդաքանդակներով դեկորատիվ տարրերի կիրառումը:

Ելնելով բնակլիմայական պայմաններից և բազմամյա փորձից նպատակահարմար է լանջավոր տանիքների օգտագործումը (քառալանջ):

Հիմք ընդունելով ՀՀ բնակավայրերում նոր կառուցվող /վերակառուցվող, վերանորոգվող/ շենքերի և շինությունների տանիքների ու արտաքին այլ տարրերի նկատմամբ միասնական պահանջներ սահմանելու ուղեցույցը նպատակահարմար է համայնքում նոր կառուցվող /վերակառուցվող, վերանորոգվող/ շենքերի և շինությունների տանիքները կառուցվեն բնական և արհեստական կղմինդրներից, մետաղե թիթեղներից, պրոֆնաստիլներից: Տարածքում որպես շինարարական նյութ արտաքին պատերի շարվածքների, երեսապատման, դեկորատիվ և այլ տարրերի համար հիմնականում կիրառել Հայաստանի տարածքում արդյունահանվող քարի տարբեր տեսակները (տուֆ, ֆելզիտային տուֆ, անդեզիտ, տրավերտին, մարմար, բազալտ, գրանիտ և այլն): Դրանով են պայմանավորված շենքերի ճակատների գունային լուծումները, քանի որ բնական քարի շարվածքը, ինչպես և բնական քարով երեսապատումը լրացուցիչ մշակումներ (սվաղ, ներկում) չեն պահանջում: Միաժամանակ շենքի ճակատների գույնը որոշիչ դեր պետք է ունենա տանիքի նյութը և գույնը որոշելու համար, ընդ որում, դեպքերի մեծամասնությունում, տանիքի գույնը գերադասելի է ընտրել պատից մուգ

երանգների միջև: Բացառություն կարելի է համարել բնական կղմինդրե տանիքը, որը համահունչ է դիտվում և մուգ և բաց պատերի հետ:

Ճակատների, պատուհանների շրջանակների, դռների, պատշգամբների և տանիքների գունային լուծումները պետք է ներդաշնակ լինեն մեկը մյուսին և շրջակա միջավայրի բնական գունակազմությանը: Շենքերի հիմնական տարրերը գերադասելի է լուծել մեղմ գույներով՝ օգտագործելով օխրայի, վարդագույնի, կարմրաշագանակագույնի, մոխրագույնի և դարչնագույնի բոլոր երանգները: Որոշ դեպքերում՝ կոնտրաստային շեշտեր ստեղծելու նպատակով հնարավոր է նաև արհեստական վառ գույների կիրառումը՝ ժամանակավոր կառույցների, բարեկարգման առանձին տարրերի՝ նստարանների, աղբամանների, գովազդային վահանակների և այլ տարրերի համար:

Արտաքին լուսավորություն իրականացնել միայն հասարակական, մշակութային և վարչական շենքերի ճակատներում և շրջակայքում: Հատուկ դեպքերում նաև բնակելի շենքերում, բնակիչների համաձայնությամբ և պահպանելով լուսավորության նորմաները:

Փողոցներին հարող հատվածներում առևտրի, սպասարկման, հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների տեղադրումը կարող է թույլատրել ավտոմեքենաների կայանատեղերի / գրպանիկների/ ձևավորումն ապահովելու պարագայում ըստ օբյեկտի մեծության՝ ավտոմեքենաների նորմատիվային քանակի հաշվարկով:

Փողոցահայաց հատվածներում բնակելի, հասարակական և արտադրական նշանակության կառույցների քարե ցանկապատների /պարիսպների/ առավելագույն բարձրությունը սահմանվում է 2.2 մետր, մետաղական ցանցկեն ցանկապատներինը՝ 2.8 մետր: Սույն նորմը չի տարածվում հատուկ նշանակության /իրավական ռեժիմի/ օբյեկտների վրա:

1-ին փողոցին, 1-ին փողոց 12 նրբանցքին հարող հատվածներում պարիսպներ կառուցելու պարագայում դրանց էսքիզային նախագծերը պարտադիր կարգով ենթակա են համաձայնեցման համայնքի ղեկավարի հետ:

Միջհամայնքային նշանակության ավտոմոբիլային ճանապարհի երթևեկելի մասից մինչև 15 մետր հետավորության վրա, ինչպես նաև տրանսպորտային հանգույցների տարածքներում արգելվում է ցանկացած տիպի շենքերի կառուցումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2404-Ն որոշմանը համապատասխան:

1-ին փողոցին, 1-ին փողոց 12 նրբանցքին հարող հատվածներում՝ երթևեկելի մասերում հողային աշխատանքների իրականացումը թույլատրվում է ժամը 20-ից ժամը 8-ի միջակայքում, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված ժամանակացույցին համապատասխան: Բացառություն կարող են կազմել վթարային և արտակարգ իրավիճակներում կատարվող աշխատանքները:

Գովազդային վահանակների և ազդագրերի տեղադրումն իրականացվում է միայն համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված սխեմաների կամ էսքիզների նախագծերի հիման վրա: Բնակելի թաղամասերում թույլատրվում է այնպիսի տնայնագործական գործունեությամբ կամ արհեստներով զբաղվելը, որոնք չեն գերազանցում աղմուկի և վտանգավոր արտանետումների թույլատրելի մակարդակը:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի, շքաբակերի (կուրդոնյերների) և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

Լեռնանիստ համայնքը գտնվում է Երևանից 45 կմ, իսկ Հրազդանից՝ 7 կմ հեռավորության վրա: Համայնք մտնող ճանապարհը ասֆալտապատված է, ներհամայնքային ճանապարհների ընդհանուր երկարությունը 14 կմ է, որից 10 կմ-ը ասֆալտապատված է, սակայն հաշվի առնելով համայնքի բնակլիմայական պահմանները ասֆալտապատված ճանապարհների մոտ 7 կմ ասֆալտը քանդվել է:

Համայնքում առկա են 3 սպասասրահներ՝ կառուցված թեթև կոնստրուկցիաներից, թափանցիկ պատերով, կահավորված նստարաններով, որոնք տեղադրված են համայնք մտնող ճանապարհի աջակողմյան հատվածում, իրարից մոտ 200 մետր հեռավորության վրա:

Խաչմերուկ մտնող փողոցների բեռնվածության մակարդակը բարելավելու, երթևեկությունը կարգավորելու համար նպատակահարմար է տեղադրել լուսակիրներ:

Կանգառներում հնարավորության դեպքում պետք է իրականացնել արգելակման գոտիներ: Պարտադիր են համապատասխան նշագծումները և երթևեկության նշանները:

Ցանկացած ճարտարապետական կառուցապատման կամ հուշարձանների վերականգնման ժամանակ անհրաժեշտ է ընդունել որոշում հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով, ապահովելով վերջիններիս, կենսագործունեության լիարժեք պայմաններ:

Ճանապարհային ցանցին հարող պարիսպների և ցանկապատերի կառուցման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ճանապարհի կողնակների նորմավորված չափերը: Հենապատերի և ցանկապատերի երեսպատումը իրականացնել տեղանքի ճարտարապետական միջավայրին համահունչ:

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

Համայնքում անհրաժեշտ է նախատեսել զբոսայգու, խաղահրապարակի կառուցում : Զբոսայգու և խաղահրապարակի կառուցման տեղը անհրաժեշտ է որոշել հաշվի առնելով փողոցի ճարտարապետահատակագծային լուծումները և նրա կառուցապատումները: Անհրաժեշտ է նախատեսել հրապարակներ կարճատև հանգստի գոտիներ:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները պետք է լինեն բարեկարգված և կահավորված փոքր ճարտարապետական ձևերով, աստիճաններով, թեքահարթակներով, հենապատերով, շվաքարաններով, լուսարձակներով և այլն: Լուսարձակների քանակությունը որոշվում է տարածքի լուսավորության նորմաներով:

Լանդշաֆատա- ռեկրացիոն գոտիներում ճանապարհային ցանցի ուղեգծումը անհրաժեշտ է իրականացնել հնարավորինս փոքր թեքություններով հետիոտնի տեղաշարժի հիմնական ուղղությանը համապատասխան և հաշվի առնելով սպորտ հրապարակների և խաղահրապարակների ամենափոքր հեռավորությունը: քայլուղու լայնությունը պետք է 0.75 մետրի պատիկ լինի (մեկ մարդու երթևեկության գոտու լայնությունը):

Լանդշաֆատա- ռեկրացիոն գոտիներում ճանապարհ-արահետային ցանցի մակերևույթի ծածկույթը անհրաժեշտ է իրականացնել սալիկներով, խճով և ուրիշ ամուր հանքային նյութերով, թույլ տալով ասֆալտբետոնե ծածկույթի օգտագործումը հատուկ դեպքերում:

Համայնքի ղեկավար՝

Արմին Հայրակետյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 18-Ն

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Լեռնանիստ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





Կ Ա Ր Գ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Լեռնանիստ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ և /կամ/ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):
2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Արագածավանի համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:
3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:
4. Սույն կարգը տարածվում է Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում տեղակայված /գտնվող/
 - 1) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա.
 - 2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա.
 - 3) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի և տիրապետողների վրա.
 - 4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի և տիրապետողների վրա.
 - 5) բացօթյա շուկաների և տոնավաճառների սեփականատերերի և տիրապետողների վրա:
5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝
 - 1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման աշխատանքները և մաքրության պահպանումը.
 - 2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.
 - 3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.
 - 4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում.
 - 5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6. Համայնքի վարչական (բնակավայրի) տարածքի բարեկարգման և սանիտարական մաքրման համայնքային սխեման ըստ բնակավայրերի կազմում և հաստատում է համայնքի ղեկավարը:
7. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:
8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:
9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.
 - 1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.
 - 2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.
 - 3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գունային փոփոխություններ,
 - 4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ.
 - 5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:
10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված ճարտարապետական կամ ձևավորման նախագծին համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողի վերահսկողության գծով առաջատար մասնագետի կողմից:
11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Լեռնանիստի համայնքապետարանի կողմից տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում:
12. Լեռնանիստի համայնքապետարանի համապատասխան բաժնի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:
13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝
 - 1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.
 - 2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.
 - ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը,
 - բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը,
 - գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և /կամ/ սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառուցի կուտակումներից,
 - դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառուցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիգամարգերում կամ ճամփեզրին,
 - ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառուցից:

4. Լեռնանիստ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:
 15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմին ներկայացված ֆիտոնախագծի հաստատումից հետո:
 16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության ոլորտը համակարգող բաժնի հետ:
 17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:
 18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:
 19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:
 20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝
 - 1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.
 - 2) բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի առաջին, կիսանկուղային և նկուղային հարկերում գտնվող ոչ բնակելի նշանակության տարածքների համար՝ դրանց զբաղեցրած պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.
 - 3) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.
 - 4) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և/կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից).
 - 5) արդյունաբերական և շինարարական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 50 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.
 - 6) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը.
 - 7) շուկաների, տոնավաճառների, առևտրի կենտրոնների համար՝ հատկացված և /կամ/ զբաղեցված տարածքի պարագծից 50-100 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը:
21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք

ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թվականի N 19-Ա

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի և, մասնավորապես, Լեռնանիստ համայնքի տարածքում աղբահանության հետագա աշխատանքների բարելավմանն ուղղված Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրից (հետագա տեքստում՝ «Վարկային համաձայնագիր») բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Պարտավորություն ստանձնել 2020 թվականից մինչև 2030 թվականն ընկած ժամանակատվածում հավասարաչափ մասնաբաժիններով Վարկային համաձայնագրից բխող՝ «ԿՈՏԱՅՔԻ և ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պարտավորությունների կատարմանն ուղղված՝ ենթավարկի հիմնական գումարները, հաշվարկված տոկոսագումարները, հանձնավճարները, վերաձևակերպման վճարումները, այդ թվում Հայաստանի Հանրապետության կողմից 2018-2019 թվականների ընթացքում Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վճարված գումարների վճարման առումով:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 20-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
5-Ի N 48-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
70-րդ հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի
<<Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի, <<Լեռնանիստի
մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի և <<Լեռնանիստ բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի
աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափերը հաստատելու մասին>> N 48-Ա որոշման մեջ կատարել հետևյալ
փոփոխությունները՝ որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈՔ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



2017 թվականի

դեկտեմբերի 5-ի N 48-Ա որոշման

Հոտաբերի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
 Կոմի. Կոտայքի
 մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
 2018 թվականի փետրվարի 28-ի N 20-Ա որոշման



Կոտայքի մարզի <<Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-Ի աշխատակիցների բանակը, հաստիքացուցակը և պաշտոնային
 դրույքաչափերը 2017 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	Պաշտոնի ծածկագիրը	հաստիքային միավորը	դրույքը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճա րը	Աշխատա վարձի չափը
1	2	3	4	5	6		7	8	9	10
1	<<Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա>> /ՀՈԱԿ/	Ֆուրեն	-	-	1	0.5	59 550			59 550
2		Հաշվապահ		-	1	1.0	95 280			95 280
3		Ընտանեկան բժիշկ	-	-	1	1.0	320 589			320 589
4		Ընտանեկան բուժբույր	-	-	1	1.0	94 632			94 632
5		Ընտանեկան բուժբույր	-	-	1	1.0	94 632			94 632
6		Սանիտար	-	-	1	0.75	54 564			54 564
7		Օպերատոր	-	-	1	0.75	58 428			58 428
		Ընդամենը			7	6	777 675			777 675

ԼԵՌՆԱՆԻՍ ԶԱՄԱՅՐՔԻ ԴԵԿԱԿԱՐ՝

Ա.ԶԱՅՐԱՊԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 21-Ա

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ ՀՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրության 2015 թվականի նոյեմբերի 16-ի N 51-Ա որոշման հավելվածի 3-րդ կետը

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. 2018 թվականի ապրիլի 1-ից վերսկսել Կոտայքի մարզի Լեռնանիստի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի գործունեությունը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ

7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 22 -Ա

2018 ԹՎԱԿԱՆԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԾՆՈՂԱԿԱՆ
ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետը և համայնքի ղեկավարի առաջարկությունը
Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների ծնողական ամսական վճար սահմանել՝ 4000 /չորս հազար/ դրամ:
2. Ծնողական ամսական վճարների գծով արտոնություններ սահմանել համայնքի մանկապարտեզ հաճախող երեխաների հետևյալ խմբերին.
 - 1) միակողմանի և երկկողմանի ծնողագուրկ երեխաների ամսական վճարը զեղչել 50%-ի չափով
 - 2) Մեկ ընտանիքից երեք և ավելի մանկապարտեզ հաճախող երեխաների ամսական վճարը զեղչել 50%-ի չափով:
 - 3) մանկապարտեզի աշխատակիցների մանկապարտեզ հաճախող երեխաների ամսական վճարը զեղչել 50%-ի չափով:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ԶՈՀՐԱՔՅԱՆ ՔԵՐՈՔ
7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ
9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

(Signatures and official stamp of the community)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2018 թվականի N 23 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ
հոդվածի պահանջներով

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի
<<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 2018
թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու
մասին >> N 46-Ն որոշման մեջ կատարել լրացումներ՝ որոշման հավելվածը շարադրել
նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող
10-րդ օրվանից:

Կողմ -9

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ

2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ

3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ

5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ

6. ԶՈՀՐԱԲՅԱՆ ՔԵՐՈԲ


7. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ

8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱԿԱԿ

9. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ



ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 46-Ն որոշման

Լրաց. ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
2018 թվականի փետրվարի 28-ի N 23-Ն որոշման



ԼԵՐՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ

2018ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	Օրենքով սահմանված դրույթաչափերը /դրամ/	2018 թվականին սահմանված դրույթաչափերը /դրամ/
